ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
33, Արարատի մարզ, գ.Մրգավան, 0235-2-75-29, mrgavangp.am, mrgavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 04

ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 07-Ի ԹԻՎ 02 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Մրգավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Մրգավան համայնքի ավագանու 2021թվականի ապրիլի 07-ի թիվ 02 նիստի հետևյալ օրակարգը.

1.Մրգավան համայնքի 2021թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին:

2.Մրգավան համայնքի ավագանու 14.12.2020 թվականի թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

3.Մրգավան համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

4.Մրգավան համայնքի ավագանու 15.05.2020թվականի թիվ 16 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
33, Արարատի մարզ, գ.Մրգավան, 0235-2-75-29, mrgavangp.am, mrgavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 05

ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետով Մրգավան համայնքի ավագանին **որոշում է**

Մրգավան համայնքի 2021թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների կատարողականը գնահատել բավարար:

Կից՝ հավելված 1:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

(հազ. դրամ)

ՀՀ	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	ՊԼԱՆ ՏԱՐԵԿԱՆ	ՓԱՍՏԱԹԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ	%
	Ընդամենը եկամուտներ	58047.8	12601.7	21.7
1.	Հարկեր և տուրքեր, այդ թվում՝	15413.2	2315.3	15.02
1.1	Գույքային հարկեր, այդ թվում՝	7300.0	1135.4	15.5
	Գույքահարկ փոխադրամիջոցներից ֆիզիկական անձանցից	7100.0	1061.9	14.9
	Գույքահարկ փոխադրամիջոցներից իրավաբանական անձանցից	200.0	73.5	36.7
1.2	Անշարժ գույքի հարկ, այդ թվում՝	6040.0	504.3	8.3
	Ֆիզիկական անձանցից	5900.0	386.1	6.5
	Իրավաբանական անձանցից	110.0	118.2	107.4
1.3	Ապրանքների օգտ. և իրաց. թույլտվության համար, այդ թվում՝	2073.2	675.6	32.5
	Տեղական տուրքեր, որից՝	2073.2	675.6	32.5
	Շինությունների շինարարության թույլտվության համար, որից՝	100.0	0.0	0.0
	Հիմնական շինությունների համար			
	Ոչ հիմնական շինությունների համար			
	Շենքերի և շինությունների վերակառուցման թույլտվություն			
	Շինությունների քանդման թույլտվություն			
	Ծխախոտի վաճառքի թույլտվություն	211.2	0.0	0.0
	Խմիչքների իրացման համար	441.6	120.6	27.3
	Հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար	280.4	0.0	0.0
	Վառելիքի վաճառքի համար	600.0	450.0	75.0
	Խանութներում,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքով զբաղվող օբյեկտներ	90.0	30.0	33.3
	Ժամը 24:00-ից հետո աշխատելու համար	100.0	75.0	75.0
	Ժամը 24:00-ից հետո աշխատող զվարճանքի օբյեկտների համար	0.0	0.0	0.0
	Արտաքին գովազդի համար	0.0	0.0	0.0
	Քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության իրականացում	250.0	0.0	0.0
1.4	Ապրանք. մատ. և ծառ. մատուց. այլ պարտ. վճարն.			
1.5	Այլ հարկային եկամուտներ /հողի կարգի փոփոխություն/			
2.	Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝	36848.6	9212.2	25
	Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/, որից	36848.6	9212.2	25
	Այլ դոտացիա			
	Ընթացիկ սուբվենցիաներ			
3.	Այլ եկամուտներ, այդ թվում՝	5786.0	1074.2	18.5
3.1	Գույքի վարձակալությունից մուտքեր, որից՝			
	Հողի վարձակալություն	138.0	0.0	0.0
	Այլ գույքի վարձակալություն	648.0	62.0	9.5
3.2	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայութ. մատուցումից, այդ թվում՝			
	Պատվիրակված լիազորություններ			
	Ծնողական վարձավճարներ	2000.0	0.0	0.0
3.3	Վարչական գանձումներ, այդ թվում՝	3000.0	1012.2	33.7
	Աղբահանման աշխատանքներ	3000.0	293.5	9.7
	Ինքնակամ կառույցի օրինականացում	0.0	718.7	0.0
	Տեղական վճարներ, մրցույթի, աճուրդի մասն. վճար			
	Հողերի չափագրման և նման այլ աշխ. ֆոնդիատ. վճար			

Մրցավան համայնքի ղեկավար՝ Ս.Վարդանյան

Գլխավոր հաշվապահ՝ Մ. Եփրեմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, 0235-2-75-29, mrgavangp.am, mrgavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 06-Ն

ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.12.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 36-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ <<ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածը՝ Մրգավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Մրգավան համայնքի ավագանու 14.12.2020թվականի 36-Ն որոշումը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

1.Մրգավան համայնքի տարածքում սահմանել 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի , շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար.

ա. Հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական/ ամառանոցային/ տների, ինչպես նաև՝ մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ:

բ. Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝երեսուն հազար դրամ

- 500-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ

-1000-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ

-3000 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հարզար դրամ

-20քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝հինգ հազար դրամ

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների / բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականցման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/ այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար ՝ հինգ հազար դրամ:

4) Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ:

6) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ,

- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ տասներեք հազար հարյուր դրամ,

-100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար հարյուր դրամ,

- 500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար հարյուր դրամ.

բ.օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ

- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար հարյուր դրամ,

- 500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար հարյուր դրամ.

7) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ ՝1քմ-ի համար :

8) Համայնքի վարչական տարածքում առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին/ սաունաներին/ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հարյուր հազար դրամ

գ. բաղնիքների /սաունաների/ համար՝ չորս հարյուր հազար դրամ

դ. խաղատների համար՝ մեկ միլիոն դրամ

ե. շահումով խաղերի համար՝ հինգ հարյուր հազար դրամ

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ

9) Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝հինգ հազար դրամ

- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ

- 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար հարյուր դրամ

- 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար հարյուր դրամ

- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար հարյուր դրամ

- 500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար դրամ

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ

- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ

- 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ

- 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ

-200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ինը հազար դրամ

- 500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ:

10) Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմաբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդներ թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս 1քմ-ի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20ծավալային տոկոս արտադարանք գովազդող արտաքին գովազդի համար՝երկու հազար դրամ:

բ թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝երեք հազար հինգ հարյուր դրամ:

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ:

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով:

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով:

11) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը /զինանշան, անվանում և այլն/ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ:

12) Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների՝ միկրավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ:

13) Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և / կամ/ մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ:

14) Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ:

15) Մրգավան համայնքի վարչական տարածքում Խ.Աբովյան 29 հասցեից մինչև Խ.Աբովյան 31 հասցեն ներառյալ, Երևան-Արտաշատ մայրուղի 1 հասցեից մինչև Երևան-Արտաշատ մայրուղի 11հասցեն ներառյալ և Արտաշատյան փողոց 1-ից մինչև Արտաշատյան փողոց 1/1 հասցեն ներառյալ համարել 1-ին գոտի և այդ գոտում գտնվող հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար կիրառել 0.75 գործակիցը:

2. Որոշման բոլոր կետերի դրույքաչափերը հաշվարկել 0.5գործակցի կիրառմամբ, բացառությամբ 4-րդ մասի:

Տեղական վճարների դրույքաչափերը.

1.Մրցավան համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ:

2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքները իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների / այդ թվում դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ:

3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ:

4) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տարամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ:

5) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ:

6)Աղբահանության համար

ա.բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է.

- ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական՝ երկու հարյուր դրամ:

բ. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և /կամ/ շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

-առևտրի /այդ թվում շուկաների/ , հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով 1քմ մակերեսի համար՝ հիսուն դրամ:

- հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայությունների ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով 1քմ մակերեսի համար՝ քսան դրամ:

- արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1քմ մակերեսի համար՝ հինգ դրամ

- կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և այլ նմանատիպ հասարակական շինությունների մասով 1քմ մակերեսի համար՝ երեք դրամ:

- շինություններում որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն աղբահանության վճարը ամբողջությամբ հաշվարկել տնտեսական գործունեության համար սահմանված առավել բարձր դրույքաչափով:

գ. Ոչ կենցաղային աղբի համար աղբահանության վճարը սահմանվում է

-ըստ ծավալի 1խմ աղբի համար՝ երեք հազար դրամ կամ

-ըստ զանգվածի 1տոննա աղբի համար՝ տասը հազար դրամ

7) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար՝ հինգ հարյուր դրամ:

8) Մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական վարձավճարի չափը սահմանել ամսեկան վեց հազար դրամ, իսկ այլ համայնքներից համայնքի մանկապարտեզ հաճախող երեխաների ամսեկան ծնողական վարձավճարը՝ տասներկու հազար դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, 0235-2-75-29, mrgavangp.am, mrgavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 07

ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով Մրգավան համայնքի ավագանին **որոշում է**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, 0235-2-75-29, mrgavangp.am, mrgavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 08

ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.05.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 16 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33, 34-րդ հոդվածներով , ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոմամբ հաստատված կարգի 4-րդ կետով սահմանված դրույթներով և հիմք ընդունելով Արարատի մարզպետի 01/01759-2021 26.02.2021թ. գրությունը՝ Մրգավան համայնքի ավագանին որոշում է՝

Արարատի մարզի Մրգավան համայնքի ավագանու 15.05.2020 թվականի թիվ 16 ՝ <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին>>որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1. Վերնագրի մեջ<< փաստաթղթի>> բառից հետո կարդալ <<Մրգավան համայնքի/Արարատ 4/ գլխավոր հատակագծի նախագծերը (գոտևորման նախագծերը) հաստատելու մասին>> բառերը:

2.Որոշման մեջ 1-ին կետում << փաստաթղթի>> բառից հետո կարդալ<<համայնքի/ Արարատ 4/ գլխավոր հատակագծի նախագծերը (գոտևորման նախագծերը) բառերը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ